Յոլյան ՀՀ ԱՆ Արյունաբանության և Ուռուցքաբանության Կենտրոն
Yeolyan Hematology and Oncology Center, Ministry of Health of Armenia

Մեծահասակների Սոլիդ Ուռուցքների Քիմիաթերապիայի Բաժանմունք

ՀՀ, 0014, Երևան, Ներսիսյան 7, հեռ. +374 10 28 38 00 • 7 Nersisyan St, Yerevan, 0014, Armenia • URL: **www.blood.am**

Տեղեկանք

Ա.Ա.Հ – Արայիկ[redacted]
Տարիքը -[redacted]4

Ախտորոշումը՝ Ձախ ոլոքի պրոքսիմալ մետաէպիֆիզար Յուինգի սարկոմա, IA փուլ: Վիճակ 1 կուս բ/թ հետո

Պացիենտ Արայիկ[redacted]իրեն հիվանդ է համարում 2026թ. մայիս ամսից, երբ սկսել է գանգատվել ձախ ոտքի ցավերից, ինչի կապակցությամբ անցել է ՈՒՁՀ հետազոտություն և ուղեգրվել հետագա հետազոտությունների: 26/05/2026թ. ՄաստերՄեդ ԲԿ-ում կատարվել է ԿՏ հետազոտություն, ըստ որի ձախից ոլոքային ոսկրի դիաֆիզար/մետաֆիզար հատվածում հայտնաբերվել է անկանոն ձևի օստեոլիտիկ օջախ՝ փափուկ հյուսվածքային կոմպոնենտով, ոչ հստակ, անհավասար եզրագծերով, մինչև 1.7x1.6x2.4 սմ չափսերով: Նկարագրվել է կորտիկալ շերտի տեղային դեստրուկցիա և ընդհատում, ինչպես նաև բազմաշերտ պերիօստալ ռեակցիա՝ «սոխի կեղևի» տիպի: Ոսկրի տվյալ հատվածում վիզուալիզացվել է մոտ 9.6 սմ երկարությամբ անհամասեռություն՝ սկլերոտիկ բնույթի: Շրջակա փափուկ հյուսվածքներում դիտվել են ինֆիլտրատիվ փոփոխություններ/այտուց: 29/05/2026թ. ՈՒԱԿ-ում կատարվել է տրեպան բիոպսիա: Ըստ հյուսվածքաբանական հետազոտության N4279/26՝ հյուսվածաբանական պատկերը համատեղելի է արյունային զանգվածների ֆոնին կլոր կապույտ մանրաբջջային ուռուցքային ախտահարման հետ՝ blue small round cell tumour: Կատարվել է իմունոհիստոքիմիական հետազոտություն, ըստ որի՝ CD99 (+), FLI1 (+), NKX2.2 (+), Vimentin (+), Ki67՝ 10–15%, յուինգի սարկոմա: Հիվանդության տարածվածության գնահատման նպատակով 07/06/2026թ. կատարվել է գլխի, կրծքավանդակի, որովայնի և կոնքի ԿՏ հետազոտություն: 26/05/2026թ. ԿՏ տվյալների համեմատ նշանակալի փոփոխություններ չեն դիտվել: Պաթոլոգիկ կոտրվածքի հստակ նշաններ տվյալ հետազոտությամբ չեն հայտնաբերվել: Նկարագրվել է ձախ նստոսկրում հիպերդենս օջախ՝ մինչև 0.6 սմ: Երկրորդային ախտաբանական օջախներ չեն դիտվել: 17/06/2026թ. Էրեբունի ռադիոթերապիայի կենտրոնում կատարվել է ՊԷՏ-ԿՏ հետազոտություն, ըստ որի ձախ ոլոքի պրոքսիմալ մետաէպիֆիզի շրջանում դիտվել է հիպերմետաբոլիկ ծավալային գոյացություն՝ առանց պաթոլոգիկ կոտրվածքի ձևավորման նշանների, SUVmax՝ 6.58: Մետաստատիկ ախտահարումներ չեն հայտնաբերվել:

Հաշվի առնելով կլինիկառադիոլոգիական պատկերը, հյուսվածքաբանական և իմունոհիստոքիմիական հետազոտությունների տվյալները՝ վերջնական ախտորոշվել է **ձախ ոլոքի պրոքսիմալ մետաէպիֆիզար Յուինգի սարկոմա, IA փուլ**: Պլանավորվում է համակարգային քիմիաթերապևտիկ բուժում ըստ VDC/IE սխեմայի՝ ընդհանուր 14 կուրս Նախավիրահատական քիմիաթերապևտիկ կուրսերից հետո(առնվազն 9 շաբաթ), նախատեսվում է վերագնահատել արդյունքը և ուղղորդել վիրահատության: Հաշվի առնելով ուռուցքի տեղակայումը, տեսակը, բնույթը, միջազգային ուղեցույցներին համապատասխան անհրաժեշտ է ռադիկալ վիրահատական բուժում և ոլոքի էնդոպրոտեզավորում: Հետվիրահատական շրջանում շարունակելու է հասանելիք բ/թ կուրսերը

Բուժող բժիշկ՝ Ա. Վ. Մարգսյան

Բաժնի վարիչ՝ Լ. Լ. Սաֆարյան

14/07/2026